



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2021 թվականի N 282-ՂԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՅ ԱՄԻՍՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական
ՀԱՐՑԵՐԻ նախարարությունում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների
կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝
համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2021թ. հոկտեմբերի 29-ի թիվ 282-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս	3-4 էջ
2. Ասփոփագիր	5-10 էջ
3. Հաշվեքննութեան հիմնական սկզբունքներ	10-11 էջ
4. Հաշվեքննութեան օբյեկտի ֆինանսական ցուցանիշները	11-13 էջ
5. Անհատաշահմանութիւններ պերաբերձաւ գումարներ	13-23 էջ
6. Հաշվեքննութեամբ արձանագրուած սխալներ	23-29 էջ
7. Հետզսկողական գործընթաց	29-30 էջ
8. Առաջարկութիւններ	30-32 էջ

1.ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 211-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշում, ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 163-Ն որոշում, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշում, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշում, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի մարտի 13-ի թիվ 254-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 1-ի 69-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հունիսի 30-ի թիվ 79-Ա հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 751-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 30-ի 79-Ա հրաման և կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

**Հաշվեքննության
կատարման
ժամկետը** 2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2021 թվականի
հոկտեմբերի 31-ը:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը** Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի
մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և
համապատասխանության հաշվեքննության գործող
մեթոդաբանությունների համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության
հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում,
դիտարկում, հարցում, արտաքին հաստատում,
վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ
ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում** Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ
պալատի առաջին վարչության կողմից, որի
աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի
անդամ Կարեն Կարապետյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2.1 Թվով 1 դեպքում նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին կիսամյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում չի արտացոլվել վեց ամիսների ընթացքում տարբեր ամիսներին /ապրիլ, մայիս և հունիս ամիսներին/ 90.0 հազ. դրամի չափով կատարված աշխատանքների վերաբերյալ հայտերի /կատարողականների/ գումարները: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված թվով 1 միջոցառման մասով Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում վեց ամիսների ընթացքում փաստացի կատարված աշխատանքներին:

Ընդ որում, այս պարագայում նույն չափով էլ կառաջանար կրեդիտորական պարտավորություններ:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի «օրինակելի ձև Հ-2 լրացման պահանջներ» բաժնի 9-րդ կետով, «Հավելված 1-ի «Ընդհանուր դրույթներ» բաժնի» 2-րդ կետի 3-րդ ենթակետով, «Հաշվետվությունների կազմն ու բովանդակությունը» բաժնի 5-րդ և «Հաշվետվությունների ամփոփումն ու ներկայացումը» բաժնի 14-րդ կետերով սահմանված պահանջների հետ:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ նախարարության կողմից 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվեքննությունների ընթացքում նույնպես արձանագրվել էին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների անհամապատասխանություններ, մասնավորապես առաջին եռամսյակի համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 18 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 86,641.88 հազ. դրամի կատարողականների գումար, վեց ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 19 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 154,028,69 հազ. դրամի կատարողականների գումար, ինն ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 8 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 167,294.39 հազ. դրամի կատարողականների գումար: Նշված ժամանակաշրջանների ընթացիք եզրակացությունները կազմելիս արվել են առաջարկություններ նշված անհամապատասխանությունները, ինչպես նաև արձանագրված այլ փաստերը վերացնելու ուղղությամբ, որին ի պատասխան նախարարությունը տեղեկացրել է, որ ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ համապատասխան հրամաններ, հանձնարարականներ, արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները վերացնելու ուղղությամբ:

Արդյունքում ուսումնասիրելով 2020 թվականի տարեկան կատարման ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների հետ, անհամապատասխանություններ չեն արձանագրվել: Իսկ 2021 թվականի երեք ամիսների կատարողականի նկատմամբ հաշվեքննության արդյունքներով արձանագրվել էր ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների անհամապատասխանություններ ընդամենը 5 դեպք՝ 132,724.65 հազ. դրամի չափով:

2.2 Միևնույն ժամանակ դրա հետ կապված «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվությունում չի ներառվել վեց ամիսների ընթացքում տարբեր ամիսներին գոյացած կրեդիտորական պարտքերը՝ նույն 90.0 հազ. դրամի չափով:

2.3 Վերլուծելով փաստացի ծախսերի և հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը արձանագրվեց, որ մի շարք ծրագրային միջոցառումների դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Ընդ որում կատարողականների ցուցանիշները որպես կանոն հաշվարկվում են հիմք ընդունելով դրամարկղային ծախսի ցուցանիշը: Սակայն եթե հաշվի առնենք փաստացի ծախսի ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, ապա փաստացի ծախսի և ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը կարտահայտի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների փաստացի կատարողականը: Մասնավորապես թվով 4 ծրագրային միջոցառումների դեպքում առկա է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարում:

2.4 Թվով 6 ծրագրային միջոցառումների դեպքում՝ ընդհանուր 56,874.2_հազ. դրամ ճշտված պլանով առկա է երեք ամիսների պլանավորում, սակայն դրամարկղային ծախսի կատարողականը 0% է եղել:

2.5 Առկա է դեպք /1068-12003 ծր., <<Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն>> միջոցառում/, երբ ՀՀ ֆինանսների նախարարության,, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի <<տարբերության պատճառները>> սյունակում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի և փաստացի

ցուցանիշների տարբերության պատճառները, որոնք հիմնավոր չեն կամ չեն ներկայացվել իրական պատճառները:

2.6 Հիմք ընդունելով շահառուների թվաքանակի տարեկան պլանավորումը՝ արձանագրվել է կիսամյակային սխալ պլանավորում, ինչպես նաև հաշվեքվություններում արտացոլված արդյունքային ոչ ֆինանսական փաստացի ցուցանիշները չեն համապատասխանում իրական փաստացի ցուցանիշներին, այսպես օրինակ

- 1141-11018 ծր. /Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում/- ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվեքվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների տարեկան ճշտված պլանը կազմել է 3277, 1-ին կիսամյակի համար շահառուների ընդհանուր գումարը պլանավորվել է 1638, որից նշվել է աղջիկ՝ 2326, տղա՝ 1551.5 /ընդհանուր 3877/: Առկա է անհամապատասխանություն կիսամյակային պլանավորման թվի՝ 1638 և դրանում առկա աղջիկ և տղա՝ 3877 թվի միջև: Փաստացին կազմել է 2936, որից աղջիկ 1453, տղա 1483: Ակնհայտ է, որ կիսամյակային պլանավորված 1638 շահառուների թիվը հանդիսանում է տարեկան պլանավորված թվի՝ 3877-ի շուրջ 42%-ը, ինչը տվյալ միջոցառման պարագայում սխալ է, քանի, որ նշված միջոցառումը նախատեսում է սպասարկել ամսական նույն շահառուների քանակ, ինչ որ նախատեսված է տարեկան պլանում, այսինքն կիսամյակային, ինչպես նաև եռակսյակային պլանները պետք է համընկնեն տարեկան պլանին, եթե այլ հանգամանքներ չկան դրանք փոփոխելու: Արդյունքում սխալ պլանավորում է իրականացվել, որն առկա էր և արձանագրվել էր նաև 1-ին եռամսյակի ընթացիկ եզրակացությունում: Մասնավորապես 1-ին եռամսյակի համար համար պլանավորվել էր 819.25, փաստացին կազմել է 1828 շահառու, Վերը նշված արդյունքային ցուցանիշներում 1-ին եռամսյակի համար պլանավորված 819.25 շահառուների թվաքանակը անհիմն էր, քանի որ նշված 819.25 թիվը մեխանիկորեն տարեկան պլանի 1/4 մասն է, այնինչ նշված միջոցառումը նախատեսում է սպասարկել ամսական նույն շահառուների քանակ, ինչ որ նախատեսված է տարեկան պլանում, այսինքն եռամսյակային պլանը պետք է համընկնի տարեկան պլանին, եթե այլ հանգամանքներ չկան դրանք փոփոխելու: Անհրաժեշտ է փաստել, որ առաջին եռամսյակի համար

նշված թերությունը արձանագրելուց հետո 6 ամիսների պլանային ցուցանիշներում համապատասխան ուղղումներ չեն կատարվել:

- 1153-11001 ծր. /Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում/- ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների հետազոտությունների մասով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է իրականացնել 9 հետազոտություն, հետազոտությունների արդյունքում ներկայացված առաջարկությունների թիվը՝ 95, վերապատրաստվող աշխատողների թիվը՝ 700, 1-ին կիսամյակի համար, ինչպես նաև 1-ին եռամսյակի համար պլանավորվել էր նույն քանակական ցուցանիշները: Սակայն ելնելով միջոցառման բաղադրիչների բնույթից պլանավորման թվերը պետք է փոփոխվեր աճողական կարգով: Նույն խնդիրն է արձանագրվել նաև 1-ին եռամսյակի համար կազմված արձանագրությունում, որն արտացոլված է նաև ընթացիկ եզրակացությունում, սակայն արդյունքային ցուցանիշներում ճշգրտումներ չեն իրականացվել:
- 1153-11002 ծր. /Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ/- Համաձայն 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության /հավելված N11.1/ սուպերվիզիայի ծառայություններ ստացած մասնագետների տարեկան ճշտված պլանային թիվը կազմել է 300, 1-ին կիսամյակի, ինչպես նաև 1-ին եռամսյակի ճշտված պլանային թիվը նույնն է, ինչ որ տարեկանը՝ 300, փաստացին՝ 1-ի կիսամյակին և 1-ին եռամսյակի համար նույնպես նույն թիվն է՝ 53, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ ուսուցում անցած մասնագետների տարեկան ճշտված պլանային թիվը կազմել է 140, 1-ին կիսամյակի, ինչպես նաև 1-ին եռամսյակի ճշտված պլանային թիվը նույնն է, ինչ որ տարեկանը՝ 140, փաստացին՝ 1-ի կիսամյակին և 1-ին եռամսյակի համար նույնպես նույն թիվն է՝ 24, մշակված ուղեցույցների տարեկան պլանը կազմել է 2, 1-ին կիսամյակի, ինչպես նաև 1-ին եռամսյակի ճշտված պլանային թիվը նույնն է, ինչ որ տարեկանը՝ 2, փաստացին՝ 1-ի կիսամյակին և 1-ին եռամսյակի համար նույնպես նույն թիվն է՝ 2: Հարկ է նշել, որ նշված

հաշվետվության մեջ պլանային ցուցանիշները սխալ են արտացոլված: Մասնավորապես տարեկան, 1-ին եռամսյակի և 1-ին կիսամյակի պլանային ցուցանիշները չէր կարող նույն թվերը լինել, ինչպես նաև 1-ին եռամսյակի և 1-ին կիսամյակի փաստացի թվերը նույնպես նույնն են, որի հիման վրա կարելի է եզրակացնել, որ 2-րդ եռամսյակում այդ մասով որևէ աշխատանք չի տարվել: Միևնույն ժամանակ համաձայն նախարարության <<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի տեղեկատվության 1-ին կիսամյակում սուպերվիզիայի ծառայություններ ստացած մասնագետների փաստացի թիվը կազմել է 142՝ հաշվետվությամբ նշված 53-ի փոխարեն, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ ուսուցում անցած մասնագետների 1-ին կիսամյակի փաստացի թիվը կազմել է 35՝ հաշվետվությամբ նշված 24-ի փոխարեն, իսկ մշակված ուղեցույցների մասով 1-ին կիսամյակում փաստացին կազմել է 1: Արդյունքում նշված հաշվետվության մեջ արտացոլված 1-ին կիսամյակում բոլոր 3 բաղադրիչների մասով փաստացի թվերը չեն համապատասխանում իրականությանը:

2.7 Առկա է դեպք, երբ առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվություններում ճշտված պլանի արժեքային ցուցանիշը արտացոլում է ոչ թե վեց ամիսների համար նախատեսված աշխատանքների ծավալը, այլ հինգ ամիսների՝ հունվար, փետրվար, մարտ, ապրիլ և մայիս: Այսպես՝

1117-11004 ծր. /Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ/-Միջոցառումն իրականացնող է հանդիսանում «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը: Ճշտված պլանը առաջին կիսամյակի համար կազմել է 132,055.0 հազ. դրամ: Հիմնադրամից նախարարություն կատարողականներ է ներկայացվել՝ հունվար ամսվա համար՝ 26,854.6 հազ. դրամ, փետրվար ամսվա համար՝ 26,854.6 հազ. դրամ, մարտ ամսվա համար՝ 26,115.3 հազ. դրամ, ապրիլ ամսվա համար՝ 26,115.3 հազ. դրամ, մայիս ամսվա համար՝ 26,115.3 հազ. դրամ և հունիս ամսվա համար՝ 26,115.2 հազ. դրամ: Հաշվի առնելով նշված ցուցանիշները կարելի է փաստել, որ ճշտված պլանը 1-ի կիսամյակի համար 132,055.0 հազ. դրամ թիվը ոչ թե վեց ամիսների համար նախատեսված աշխատանքների ծավալն է, այլ իրենից ներկայացնում է հունվար, փետրվար, մարտ, ապրիլ և մայիս ամիսների համար նախատեսված աշխատանքների ծավալը, որը ըստ համապատասխան

պայմանագրի պետք է վճարվեր փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս և հուլիս ամիսներին: Իրական պլանը 1-ին կիսամյակում 132,055.0 հազ. դրամի փոխարեն պետք լիներ 158,170.3 հազ. դրամ:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում: Ուսումնասիրելով ներկայացված տեղեկատվությունը, օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից, ինչպես նաև հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

2021 թվականի ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային խնդիր է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում առհասարակ չներառելու խնդիրները, ինչպես նաև հաշվետվություններում ոչ ֆինանսական ցուցանիշների մասով սխալ պլանավորման և փաստացի կատարողականների սխալ արտացոլման խնդիրները:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

Ի պատասխան Հաշվեքննիչ պալատի 30.09.2021թ. թիվ ՀՊԵ-ԿԿ-192 գրության, որով նախարարություն էր ներկայացվել հաշվեքննության արձանագրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.10.2021թ. թիվ ՄՆ/40442-21 գրությամբ Հաշվեքննիչ պալատ է ներկայացվել հաշվեքննության արձանագրության ստորագրված տարբերակը, որում նախարարության կողմից որևէ առարկություն չի ներկայացվել:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը կազմել է 24,994,489.1 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 14,968,076.78: Նշված տվյալները արտացոլված են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի վեց ամիսների ՀՀ պետական բյուջեի կատարողականների աղյուսակներում, իսկ երեք ամիսների ՀՀ պետական բյուջեի կատարողականների աղյուսակներում որպես տարեկան պլան նշված է եղել 27,229,168.31 հազ. դրամ, իսկ ճշտված պլանը՝ 17,498,511.98 հազ. դրամ: Նախարարության բյուջեի վեց և երեք ամիսների բյուջեի կատարողականների աղյուսակներում նշված 2021 թվականի տարեկան պլանավորման ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի 980-Ն որոշմամբ 1088՝ զբաղվածության ծրագրերի և «1011 Անապահով սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի 11003, ինչպես նաև «1160 Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն» ծրագրի 11005 միջոցառումների կատարողները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից նախարարության Միասնական սոցիալական ծառայության կատարմանը փոխանցելու հանգամանքով:

Արդյունքում նախարարության բյուջետային ծախսերի կատարողականները վերլուծելիս հիմք է ընդունվում վեց ամիսների կատարողականների աղյուսակներում նշված ցուցանիշները, որի մեջ արդեն իսկ բացակայում են Միասնական սոցիալական ծառայությանը փոխանցված ծրագրերը և միջոցառումները: Այսպիսով Ընդհանուր առմամբ տարեկան պլանի և ճշտված պլանի փոփոխությունների արդյունքում՝ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 10,026,412.4 հազ. դրամի չափով նվազեցում: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 10,440,162.0 հազ. դրամ գումարը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ: Կատարվել է նաև ավելացումներ, օրինակ «Սոցիալական ապահովություն» 1205 ծրագրով տարեկան պլանավորում չի իրականացվել, սակայն տարեկան ճշտված պլանով այն սահմանվել է 643,308.8 հազ. դրամ: Նշված ծրագրով նախատեսվել է իրականացնել թվով երեք միջոցառումներ, մասնավորապես 1205-12013 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ համայնքներում հրետակոծության հետևանքով քաղաքացիների անշարժ գույքին հասցված վնասների փոխհատուցում»՝ 7,200.0 հազ. դրամ, 1205-12020 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց»՝ 600,000.0 հազ. դրամ և 1205-12024 միջոցառում՝

«Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակելի անշարժ գույքի հասցեում փաստացի բնակված քաղաքացիներին դրամական աջակցություն»՝ 36,108.0 հազ. դրամ:

Վեց ամիսների պլանը կազմել է 11,147,792.9 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 7,366,697.9 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 3,781,095.0 հազ. դրամի նվազեցում 33.9%-ի չափով: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 4,424,790.0 հազ. դրամ գումարից 4,350,906.0 հազ. դրամը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ, արդյունքում նշված ծրագրով ճշտված պլանը կազմել է 73,884.0 հազ. դրամ: Կատարվել է նաև ավելացումներ, օրինակ «Սոցիալական ապահովություն» 1205 ծրագրով տարեկան պլանավորում չի իրականացվել, սակայն տարեկան ճշտված պլանով այն սահմանվել է 643,308.8 հազ. դրամ, 1-ին կիսամյակի ճշտված պլանը կազմել է նույ տարեկան պլանը՝ 643,308.8 հազ. դրամ: Նշված ծրագրով նախատեսվել է իրականացնել թվով երեք միջոցառումներ, մասնավորապես 1205-12013 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ համայնքներում հրետակոծության հետևանքով քաղաքացիների անշարժ գույքին հասցված վնասների փոխհատուցում»՝ տարեկան և 1-ին կիսամյակի ճշտված պլան՝ 7,200.0 հազ. դրամ, 1205-12020 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց»՝ տարեկան և կիսամյակի ճշտված պլանը՝ 600,000.0 հազ. դրամ և 1205-12024 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակելի անշարժ գույքի հասցեում փաստացի բնակված քաղաքացիներին դրամական աջակցություն»՝ տարեկան ճշտված պլանը 36,108.0 հազ. դրամ, կիսամյակի ճշտված պլանը՝ 36,108.0 հազ. դրամ:

1-ին կիսամյակի դրամարկղային ծախսը կազմել է 5,518,588.7 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 1,848,109.2 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմում է 74.9 տոկոս: Փաստացի ծախսը կազմել է 6,898,084.83 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմում է 1,379,496.1 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը /կատարողականը/ ճշտված պլանի նկատմամբ կկազմի 93.64

տոկոս: Դեբիտորական պարտքը կազմել է 1,113,384.35 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 961,014.1 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները ըստ ծրագրերի և միջոցառումների ներկայացվում է կից հավելված 1-ով՝ բյուջետային ծրագրերի աղյուսակի տեսքով, որտեղ ներկայացված է նաև անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումները:

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Վերլուծվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2021 թվականի վեց ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները: Արդյունքում արձանագրվել է, որ ծրագրային միջոցառումների ճնշող մեծամասնությունում դրամարկղային ծախսի մասով առկա է ճշտված պլանի նկատմամբ թերակատարումներ: Դրանց գերակշռող մասում թերակատարումները առկա է նաև փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով: Միևնույն ժամանակ փաստացի ծախսի մասով ճշտված պլանի նկատմամբ որոշ դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Մի շարք դեպքերում առկա է նաև դրամարկղային ծախսի մասով 0 կատարողականներ: Հիմնականում որպես թերակատարման, ինչպես նաև դրամարկղային ծախսերի մասով 0 կատարողականների պատճառներ նշվել է, վեց ամիսների ընթացքում շահառուների թվաքանակի պակաս լինելը, որոշ ծախսային հոդվածներով փաստացի պակաս ծախս կատարելու, գնման ընթացակարգերի (մրցույթների) պլանավորված ժամանակին չիրականացվելու, չկայանալու կամ չամփոփվելու և համապատասխան պայմանագրերը ուշ կնքելու, ինչպես նաև որոշ դեպքերում հայտերը /կատարողականները/ կիսամյակի ավարտից հետո՝ սահմանված ժամկետում չներկայացնելու հանգամանքը, որոշ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանների ուշ ընդունվելու, պայմանավորված հարակից այլ աշխատանքները չավարտելու հանգամանքներով: Սակայն հարկ է նշել, որ 1 դեպքում նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին կիսամյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում չի արտացոլվել մասով վեց ամիսների ընթացքում տարբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ հայտերի /կատարողականների/ գումարները, ինչը որևէ ձևով չի կարող հիմնավորվել վերը նշված պատճառաբանություններով: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարություն

ներկայացված թվով 1 միջոցառուման մասով Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում վեց ամիսների ընթացքում փաստացի կատարված աշխատանքներին:

Մասնավորապես. Նշված թվով 1 դեպքում /1110-12001 միջոցառում, <<Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում>>/ 90.0 հազ. դրամի չափով աշխատանքներ է կատարված վեց ամիսների ընթացքում՝ ապրիլ, մայիս և հունիս ամիսներին հայտ /կատարողականներ/ է ներկայացված նախարարություն, մինչդեռ դրանք չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վեց ամիսների Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում: Ընդ որում, այս պարագայում նույն չափով էլ կառաջանար կրեդիտորական պարտավորություններ:

Հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարության 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի «օրինակելի ձև Հ-2 լրացման պահանջներ» մասի 9-րդ կետի համաձայն «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» աղյուսակի «ԺԱ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները, հաշվարկված աշխատավարձի ու կրթաթոշակների գծով կատարված ծախսերը:

Միևնույն ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի՝

- «Ընդհանուր դրույթներ» մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն «Հաշվետու ժամանակահատված է համարվում տվյալ ֆինանսական տարվա այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացված գործառույթների վերաբերյալ կամ որի ավարտի դրությամբ ներկայացվում է հաշվետվությունը»:
- «Հաշվետվությունների կազմն ու բովանդակությունը» մասի 5-րդ կետի համաձայն «Հաշվետվության թվային մասն արտացոլում է հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ, տվյալ ժամանակահատվածի կտրվածքով, համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային ցուցանիշները»:
- «Հաշվետվությունների ամփոփումն ու ներկայացումը» մասի 14-րդ կետի համաձայն «Տարաժամկետ հաշվետվությունները ներկայացվում են շաբաթական, ամսական, եռամսյակային և (կամ) տարեկան պարբերականությամբ, և դրանցում արտացոլվում է հաշվետու մարմնի

կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացված որոշակի գործառույթների կամ վերջինիս տրամադրության տակ գտնվող որոշակի ակտիվների և (կամ) պարտավորությունների շարժի մասին տեղեկատվությունը»:

Համաձայն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի «Պետական մարմնի գլխավոր ֆինանսիստը, սահմանված կարգով պետական հիմնարկներից ստանալով հաշվետվությունները, ամփոփում է դրանք և լիազոր մարմնի սահմանած կարգով ներկայացնում է վերջինիս:

Պետական հիմնարկներից ստացված հաշվետվություններից բացի, գլխավոր ֆինանսիստն ապահովում է նաև պետական մարմնի կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի կատարման մասին հաշվետվությունների ամփոփումը և լիազոր մարմին ներկայացնելը:

Գլխավոր ֆինանսիստը հաշվետվության հետ միասին լիազոր մարմին է ներկայացնում նաև հաշվետվության մանրամասն վերլուծությունը՝ ծրագրի համեմատ շեղումների պատճառների բացահայտմամբ»:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի վերը նշված կետերով սահմանված պահանջների հետ, ինչը հիմք է տալիս արձանագրելու, որ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում «իրականացված գործառույթները», «ակտիվների և շարժի մասին տեղեկատվությունը», «համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային ցուցանիշները», մասնավորապես վեց ամիսների ընթացքում տարբեր ամիսներին կատարված աշխատանքներ թվով 1 միջոցառման մասով 90.0 հազ. դրամի չափով, ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 254-Ն հրամանով սահմանված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ձև Հ-2 հաշվետվությունում չի ներառվել: Միևնույն ժամանակ դրա հետ կապված «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվությունում չի ներառվել վեց ամիսների ընթացքում տարբեր ամիսներին գոյացած կրեդիտորական պարտքը՝ նույն 90.0 հազ. դրամի չափով:

Առկա են դեպքեր, երբ ՀՀ ֆինանսների նախարարության,, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային

(կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի <<տարբերության պատճառները>> սյունակում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետվ. ժամանակաշրջանի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների տարբերության պատճառները, որոնք դեպքերի ճնշող մեծամասնությամբ հիմնավոր չեն ու չեն արտահայտում իրական հիմնապատճառները:

Այսպես, օրինակ

- 1068-12003 ծր. / Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն/- Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 433,268.3 հազ. Դրամ, փաստացի ծախսը՝ 564,952.7 հազ. Դրամ: Համաձայն հաշվետվություն ձև 4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 131,684.42 հազ. դրամ: Դրամարկղային ծախսի կատարողականը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 100.0%, ընդ որում 1-ին եռամսյակի կատարման %-ը կազմել էր 99.9%, կատարման տեմպը հիմնականում փոփոխություն չի կրել: Փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կկազմի 130.4 % /564,952.7:433,380*100/, ընդ որում 1-ին եռամսյակի կատարման %-ը կազմել էր 143.3%, կատարման տեմպը նվազել է 12.6%-ով /143.3-130.4/: ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների տարեկան ճշտված պլանը կազմել է 1228, 1-ին կիսամյակի համար պլանավորվել է սպասարկել 684 շահառու, փաստացին կազմել է 650, 1-ին եռամսյակի փաստացին կազմել էր 279 շահառու: Հարկ է նշել, որ 6 ամիսների համար արժեքային մասով կատարված է 100%-ով, սակայն որպես տարբերության պատճառ նշվել է, որ այն պայմանավորված է շահառուների թվաքանակի պակաս լինելու հետ: Սա հիմք է տալիս փաստելու, որ ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի տարբերության պատճառները սյունակում բովանդակային խնդիրները ձևական են նշվում՝ տվյալ դեպքում տարբերություն չլինելու պարագայում նշվել է տարբերության

առաջացման պատճառներ: Միևնույն ժամանակ նույն խնդիրն էր առաջացել նաև 1-ին եռամսյակում, մասնավորապես 1-ին եռամսյակի համար արձանագրվել էր, որ 1-ին եռամսյակի համար պլանավորվել է սպասարկել 272 շահառու, փաստացին կազմել է 279 շահառու: Վերը նշված արդյունքային ցուցանիշներում նախարարության կողմից որպես պատճառ նշած “պայմանավորված է շահառուների թվաքանակի պակաս լինելու հետ” արտահայտությունը նույնպես անհիմն էր, քանի որ 1-ին եռամսյակի շահառուների փաստացի թվաքանակը ոչ թե պակաս, այլ ավելի է եղել ճշտված պլանից:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարության,, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի <<Կարբերության պատճառները>> սյունակում նախարարության կողմից ներկայացված հաշվետվու ժամանակաշրջանի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների փարբերության պատճառների և իրական պատճառների միջև:

Առկա են դեպքեր, երբ հիմք ընդունելով շահառուների թվաքանակի փարեկան պլանավորումը՝ արձանագրվել է կիսամյակային սխալ պլանավորում, ինչպես նաև հաշվետվություններում ոչ ֆինանսական փաստացի ցուցանիշների սխալ արտացոլում:

- 1141-11018 ծր. /Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում/- Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 57,129,92 հազ. Դրամ, փաստացի ծախսը՝ 75,620.97 հազ. Դրամ: Համաձայն հաշվետվություն ձև 4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 18,373.0 հազ. Դրամ: Դրամարկղային ծախսի կատարողականը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 50.0 %, ընդ որում 1-ին եռամսյակի կատարողականը կազմել էր 18.3%, կատարման տեմպը ավելացել է 31.7 %-ով /50.0-18.3/: Փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կկազմի 66.2 % /75,620.97:114,225.3*100/, ընդ որում 1-ին եռամսյակի կատարողականը կազմել էր 36.4 %՝ կատարման տեմպը ավելացել է 29.8 %-ով /66.2-36.4/: ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի

ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների տարեկան ճշտված պլանը կազմել է 3277, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների թիվը՝ 6, 1-ին կիսամյակի համար շահառուների ընդհանուր գումարը պլանավորվել է 1638, որից նշվել է աղջիկ՝ 2326, տղա՝ 1551.5 /ընդհանուր 3877/, փաստացին կազմել է 2936, որից աղջիկ 1453, տղա 1483, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների թիվը՝ 23: Արդյունքում սխալ պլանավորում է իրականացվել, որը արձանագրվել է նաև 1-ին եռամսյակի արձանագրությունում: Մասնավորապես 1-ին եռամսյակի համար համար պլանավորվել էր 819.25, փաստացին կազմել է 1828 շահառու, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների փաստացի թիվը կազմել է 15: Վերը նշված արդյունքային ցուցանիշներում 1-ին եռամսյակի համար պլանավորված 819.25 շահառուների թվաքանակը անհիմն էր, քանի որ նշված 819.25 թիվը մեխանիկորեն տարեկան պլանի 1/4 մասն է, այնինչ նշված միջոցառումը նախատեսում է սպասարկել ամսական նույն շահառուների քանակ, ինչ որ նախատեսված է տարեկան պլանում, այսինքն եռամսյակային պլանը պետք է համընկնի տարեկան պլանին, եթե այլ հանգամանքեր չկան դրանք փոփոխելու: Անհրաժեշտ է փաստել, որ առաջին եռամսյակի համար նշված թերությունը արձանագրելուց հետո 6 ամիսների պլանային ցուցանիշներում համապատասխան ուղղումներ չեն կատարվել:

- 1153-11001 ծր. /Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում/- Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 47,778.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 48,159.2: Համաձայն հաշվետվություն ձև 4-ի դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 17,098.0 հազ. դրամ /01.02.2021թ.վերադարձվել է պետբյուջե/, հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝ 7,528.9 հազ. դրամ /համաձայն դրամաշնորհի պայմանագրի տրվել է կանխավճար/, կրեդիտորական պարտք տարեսկզբին՝ 0, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 7,909.4 հազ. դրամ: Դրամարկղային ծախսի կատարողականը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 92.8 % , 1-ին եռամսյակի կատարողականը կազմել էր 93.9%, դրամարկղային ծախսի մասով կատարման տեմպը նվազել է 1.1 %-ով /93.9-92.8/: Փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կկազմի 93.6 % /48,159.2 :51,464.9*100/, 1-ին եռամսյակի կատարողականը կազմել էր 92.18 %, կատարման տեմպը ավելացել է 1.42% -ով /93.6-92.18/ ՀՀ ֆինանսների

նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների հետազոտությունների մասով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է իրականացնել 9 հետազոտություն, հետազոտությունների արդյունքում ներկայացված առաջարկությունների թիվը՝ 95, վերապատրաստվող աշխատողների թիվը՝ 700, 1-ին կիսամյակում պլանավորվել է իրականացնել 9 հետազոտություն, առաջարկությունների թիվը՝ 95, վերապատրաստվող աշխատողների թիվը՝ 700, փաստացին՝ հետազոտությունների թիվը՝ 9, առաջարկությունների թիվը՝ 95, վերապատրաստվող աշխատողների թիվը՝ 147: 1-ին եռամսյակում պլանավորվել էր իրականացնել 9 հետազոտություն, առաջարկությունների թիվը՝ 95, վերապատրաստվող աշխատողների թիվը՝ 700, փաստացին՝ համապատասխանաբար 9, 95 և 0: Հարկ է նշել, որ <<Սոցիալական պաշտպանության ոլորտի կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման 2021 թ. ծրագիրն ու սեմինարների 2021թ. պլանը հաստատելու մասին>> նախարարի թիվ 59-Ա/1 հրամանը տրվել է 2021 թ. մայիսի 7-ին, որի պատճառով 1-ին եռամսյակում վերապատրաստումներ չեն իրականացվել: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ վերապատրաստվող աշխատողների 1-ին կիսամյակում 700 թվի պլանավորումը սխալ է իրականացվել, հաշվի առնելով որ տարեկան պլանը նույնպես 700 է: Նույն խնդիրը արձանագրվել է նաև 1-ին եռամսյակի համար կազմված արձանագրությունում, որն արտացոլված է նաև ընթացիք եզրակացությունում, սակայն արդյունքային ցուցանիշներում ճշգրտումներ չեն իրամանացվել:

- 1153-11002 ծր. / Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ/- Սուպերվիզիան արդեն իսկ վերապատրաստված շահառուի խորհրդատվական ծառայությունների մատուցումն է: Ծրագրի թիրախում զբաղվածության պետական գործակալության /ԶՊԳ/ և տարածքային կենտրոնների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների /ՆՄԿՈՒՀ/, հանրական դպրոցների արդեն վերապատրաստված մասնագետներն են: Համաձայն 2021թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության /հավելված N11.1/ սուպերվիզիայի ծառայություններ ստացած մասնագետների տարեկան ճշտված պլանային

թիվը կազմել է 300, հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը՝ 300, փաստացին կազմել է 53, 1-ին եռամսյակի ճշտված պլանային թիվը՝ 300, փաստացին կազմել է 53, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ ուսուցում անցած մասնագետների տարեկան ճշտված պլանային թիվը կազմել 140, հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանային թիվը՝ 140, փաստացին՝ 24, առաջին եռամսյակում ճշտված պլանային թիվը՝ 140, փաստացի՝ 24, մշակված ուղեցույցների տարեկան պլանը կազմել է 2, 1-ին կիսամյակի պլանին թիվը՝ 2, առաջին եռամսյակում՝ 2, փաստացին՝ 2: Հարկ է նշել, որ նշված հաշվետվության մեջ պլանային ցուցանիշները սխալ են արտացոլված: Մասնավորապես տարեկան, 1-ին եռամսյակի և 1-ին կիսամյակի պլանային ցուցանիշները չէր կարող նույն թվերը լինել, ինչպես նաև 1-ին եռամսյակի և 1-ին կիսամյակի փաստացի թվերը նույնպես նույնն են, որի հիման վրա կարելի է եզրակացնել, որ 2-րդ եռամսյակում այդ մասով որևէ աշխատանք չի տարվել: Մինևնույն ժամանակ համաձայն նախարարության <<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի տեղեկատվության 1-ին կիսամյակում սուպերվիզիայի ծառայություններ ստացած մասնագետների փաստացի թիվը կազմել է 142՝ հաշվետվությամբ նշված 53-ի փոխարեն, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ ուսուցում անցած մասնագետների 1-ին կիսամյակի փաստացի թիվը կազմել է 35՝ հաշվետվությամբ նշված 24-ի փոխարեն, իսկ մշակված ուղեցույցների մասով 1-ին կիսամյակում փաստացին կազմել է 1: Արդյունքում նշված հաշվետվության մեջ արտացոլված 1-ին կիսամյակում բոլոր 3 բաղադրիչների մասով փաստացի թվերը չեն համապատասխանում իրականությանը:

Համաձայն հաշվետվություն ձև <- 2-ի դրամարկղային ծախսը կազմել է 11,569.5 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,315.9 հազ. դրամ, դրամարկղային ծախսի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 96.1 %, 1-ին եռամսյակի կատարման %-ը կազմել է 98.5 %, կատարման տեմպը նվազել է 2.4%-ով /98.5-96.1/: Փաստացի ծախսի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կկազմի 94.0% /11,315.9:12,040.3*100/, ի-ին եռամսյակի կատարման %-ը կազմել է 97.3 0% , կատարման տեմպը նվազել է 3.3%-ով /97.3-94/: համաձայն հաշվետվություն ձև < 4-ի դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 4,175.0 հազ. դրամ /01.02.2021թ.վերադարձվել է պետբյուջե/, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 2,002.0 հազ. դրամ /համաձայն դրամաշնորհի պայմանագրի տրվել է կանխավճար/, կրեդիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 0, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 1,748.4 հազ. դրամ:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ում նշված առաջին կիսամյակի համար ոչ ֆինանսական ցուցանիշների՝ մասնավորապես շահառուների թվաքանակի ճշտված պլանի, ինչպես նաև փաստացի կատարողական ցուցանիշների ճիշտ արտացոլման մասով:

Առկա է դեպք, երբ հաշվետվություն ձև-2-ում ճշտված պլանի արժեքային ցուցանիշը արտացոլում է ոչ թե վեց ամիսների համար նախատեսված աշխատանքները, այլ հինգ ամիսների՝ հունվար, փետրվար, մարտ, ապրիլ և մայիս: Այսպես,

- 1117-11004 ծր. /Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ/-Միջոցառումն իրականացնող է հանդիսանում «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը: 1-ին կիսամյակի ճշտված պլանը կազմել է 132,055.0 հազ. դրամ, Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 105,939.8 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 158,169.8 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև 4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 52.230.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսի կատարողականը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 80.2%, 1-ին եռամսյակում՝ 50.0%, իսկ փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կկազմի $119.8 \% /158,169.8 :132,055.0 * 100/$, 1-ին եռամսյակում կազմել էր $148.6 \% :$ Դրամարկղային ծախսի կատարման տեմպը 1-ին եռամսյակի նկատմամբ ավելացել է 30.2%-ով $/80.2-50.0/$, իսկ փաստացի ծախսի կատարման տեմպը նվազել է 28,8 %-ով $/148.6-119.8/$: Սակայն, 18.02.2021թ. նախարարության և հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհի պայմանագրի հավելված 2-ով ներկայացված է վճարման ժամանակացույցը, համաձայն որի աճողական կարգով՝ հունվարին վճարում չի նախատեսվում, փետրվարին՝ 26,854.6 հազ.

դրամ, մարտին՝ 53,709.2, ապրիլին՝ 79,824.5 հազ. դրամ, մայիսին՝ 105,939.8 հազ. դրամ, հունիսին՝ 132,055.0 հազ. դրամ:

Հիմնադրամից նախարարություն կատարողականներ է ներկայացվել՝ հունվար ամսվա համար՝ 26,854.6 հազ. դրամ, փետրվար ամսվա համար՝ 26,854.6 հազ. դրամ, մարտ ամսվա համար՝ 26,115.3 հազ. դրամ, ապրիլ ամսվա համար՝ 26,115.3 հազ. դրամ, մայիս ամսվա համար՝ 26,115.3 հազ. դրամ և հունիս ամսվա համար՝ 26,115.2 հազ. դրամ: Հաշվի առնելով նշված ցուցանիշները կարելի է փաստել, որ ճշտված պլանը 1-ի կիսամյակի համար 132,055.0 հազ. դրամ թիվը հանդիսանում է ոչ թե 1-ին կիսամյակում նախատեսված աշխատանքների ծավալը, այլ իրենից ներկայացնում է փետրվար, մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսներին վճարվելիք գումարների չափը, որը ճիշտ չի: Իրական պլանը 1-ին կիսամյակում 132,055.0 հազ. դրամի փոխարեն պետք է լիներ 158,305.2 հազ. դրամ: Եթե 1-ին կիսամյակի համար ճշտված պլանը սահմանվեր ոչ թե 1-ին կիսամյակում վճարվելիք գումարի չափը /հունվար ամիսը չի նախատեսվել/, այլ սահմանվեր 6 ամիսներին կատարվելիք աշխատանքների ծավալը, ապա դրամարկղային ծախսի կատարողականը կկազմի 66.9% /105,939.8:158,305.2/, իսկ փաստացի ծախսի կատարողականը կկազմի 99.9 % /158,169.8:158,305.2/

Համաձայն 2021թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության /հավելված N11.1/ սպասարկող բազաների տարեկան, կիսամյակային և եռամսյակային պլանային թիվ կազմել է 14 հատ, 1-ին կիսամյակի փաստացին կազմել է 18, 1-ին եռամսյակի փաստացին՝ 14, սպասարկվող վերկայքերի տարեկան, կիսամյակային և եռամսյակային պլանային թիվը կազմել է 6, փաստացին՝ 1-ին կիսամյակում՝ 7, 1-ին եռամսյակում՝ 6, Սպասարկվող (այդ թվում նաև վերանորոգման կարիքի) համակարգչային տեխնիկայի տարեկան պլանային թիվը կազմել է 6699 հատ, 1-ին կիսամյակում՝ 6701, փաստացին՝ 6540, եռամսյակային պլանային թիվը՝ 6700, փաստացին՝ 3287: Հիմնադրամն ունի տեխնիկայի սպասարկման մասնագետ, մշտական ներկայացուցիչ նախարարությունում, որը օպերատիվության, ժամանակի խնայողության և արագ արձագանքման ռեժիմով սպասարկում է Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների տեխնիկան, շտկում խնդիրները՝ առանց գրավոր հայտերի լրացման, որը չեն ներառվում կատարողականներում:

Առկա է անհամապատասխանություն ֆինանսական հաշվետվություններում առաջին կիսամյակի արժեքային ցուցանիշի ճշտված պլանը առաջին կիսամյակի վեց ամիսների համար նախատեսված աշխատանքները ամբողջապես չընդգրկելու մասով:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Վերլուծելով փաստացի ծախսերի և հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունից պարզ է դառնում, որ մի շարք ծրագրային միջոցառումների դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Ընդ որում կատարողականների ցուցանիշները որպես կանոն հաշվարկվում են հիմք ընդունելով դրամարկղային ծախսի ցուցանիշը: Սակայն եթե հաշվի առնենք փաստացի ծախսի ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, ապա փաստացի ծախսի և ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը կարտահայտի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների փաստացի կատարողականը: Մասնավորապես թվով 4 ծրագրային միջոցառումների դեպքում առկա է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարում: Այսպես օրինակ.

1. 1017-11001 ծր./ Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ/՝ ճշտված պլանը կազմել է 946,178.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,023,536.0 հազ. դրամ, 1-ին կիսամյակի կատարողականը կկազմի 108.2 %:
2. 11141-12003 ծր./ Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում/՝ ճշտված պլանը կազմել է 225.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 300.0 հազ. դրամ, 1-ին կիսամյակի կատարողականը կկազմի 133.3 %:
3. 1032-11005 ծր./ Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ/՝ ճշտված պլանը կազմել է 26,846.8 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 27,317.8 հազ. դրամ, 1-ին կիսամյակի կատարողականը կկազմի 102.0 %:
4. 1117-11004 ծր./ Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ՝ ճշտված պլանը կազմել է

132,055.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 158,169.8 հազ. դրամ, 1-ին կիսամյակի կատարողականը կկազմի 119.8 %:

Թվով 6 ծրագրային միջոցառումների դեպքում՝ ընդհանուր 56,874.2 հազ. դրամ ճշտված պլանով վեց ամիսների համար առկա է պլանավորում, սակայն դրամարկղային ծախսի կատարողականը 0% է կազմել: Մասնավորապես,

1. 1041-12005 ծր. / Մարդկանց թրաֆիքինգի (և/կամ) շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում/՝ ճշտված պլանը կազմել է 1,000.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %: ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանում նշված միջոցառման չկատարման պատճառները, այն է՝ <<Հաշվետու ժամանակահատվածում թրաֆիքինգի զոհին դրամական աջակցություն տրամադրելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացվել>>: Հարկ է նշել, որ տարեկան պլանավորվել է 7 փոխհատուցում, 1-ին կիսամյակում՝ 4, փաստացին կազմել է 0:
2. 1011-11005 ծր. / Սոցիալական շտապ օգնություն/՝ ճշտված պլանը կազմել է 2,317.3 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %: ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանում նշված միջոցառման չկատարման պատճառները, այն է՝ <<Պայմանավորված է հայտարարված դրամաշնորհի մրցույթը չկայանալու հանգամանքով>>: Հարկ է նշել, որ 1-ին փուլ մրցույթը հայտարարվել 18.12.2020 թ-ին՝ 5,093.9 հազ. դրամ գումարով (11 ամիսների համար), հայտերի բացումը՝ 16.01.2021 թ-ին՝ հայտեր չեն ներկայացվել: 2-րդ փուլով մրցույթը հայտարարվել է 05.02.2021 թ-ին՝ 4,167.8 հազ. դրամ գումարով (9 ամիսների համար), հայտերի բացումը՝ 09.03.2021թ-ին՝ 1 մասնակից: Հայտը մերժվել է հրավերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով (շահառուների թիվը ավելի քիչ է եղել, քան նախատեսված է հրավերով):

3-

րդ փուլով մրցույթը հայտարարվել և իրականացվել է 2-րդ եռամսյակում:

Մրցույթը չի կայացել հայտի սխալ ներկայացման պահանջով:
4-րդ փուլով մրցույթը հայտարարվել է 3-րդ եռամսյակում:

3. 1141-12007 ծր. /Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն/՝ ճշտված պլանը կազմել է 720.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %: ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանում նշված միջոցառման չկատարման պատճառները, այն է՝ <<Ծրագրի իրականացման պահանջարկ չի եղել>>: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ տարեկան պլանավորվել է վարձակալել 4 բնակարան, 1-ին կիսամյակում՝ 4, փաստացին՝ 0, առաջին եռամսյակում՝ 4, փաստացին՝ 0: Բնակարանի վարձակալության վճարի չափը սահմանվել է 30.0 հազ. դրամ՝ ներառյալ կոմունալ ծախսերը: Նման պայմաններով նախարարությունը 1-ին եռամսյակում առաջարկել էր Գավառի մանկատան տնօրենին սաներից մեկի համար բնակարան վարձակալել, սակայն մանկատան տնօրենը 17.06.2021թ. գրությամբ տեղեկացրել էր, նախարարությանը, որ ամսական հատկացվող 30.0 հազ. դրամ գումարը բնակարանի վարձակալության և կոմունալ վճարումների համար իրատեսական չէ և այդ իսկ պատճառով նախատեսվող շահառուն հրաժարվել է օգտվելու նշված միջոցառումից օգտվելու հնարավորությունից: 1-ին եռամսյակի կատարողականները վերլուծելիս արձանագրվել էր, որ 1-ին եռամսյակի համար 0 կատարողականի պատճառը վարձակալության և կոմունալ վճարների ամսական տրամադրվող գումարի չափն է: Այսինքն նախարարության կողմից նշված „ծրագրի կողմից պահանջարկ չլինելու հանգամանքը պայմանավորված է սահմանված վարձակալության վճարի 30.0 հազ. դրամի ցածր լինելու հանգամանքով: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ բնակարանների վարձակալության միջոցառումը նախորդ տարիներին չի իրականացվել:
4. 1032-12001 ծր. /Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին կոմունալ ծախսերի դիմաց դրամական փոխհատուցում/՝ ճշտված պլանը կազմել է 7,200.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %: ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի

ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանում նշված միջոցառման չկատարման պատճառները, այն է՝ <<Ծրագիրը չի իրականացվել ՀՀ-ում գործող բանկերի հետ համագործակցության բացակայության պատճառով:>> Հարկ է նշել, որ տարեկան պլանային թիվը կազմել է 100, կիսամյակայինը՝ 100, փաստացի սպասարկված շահառուների թիվը՝ 0, 1-ին եռամսյակի պլանը՝ 100, փաստացի սպասարկված շահառուների թիվը՝ 0: Նշված միջոցառումը իրականացվում է ՀՀ կառավարության 2020 թ. հուլիսի 30-ի <<<< սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցման կարգը, ինչպես նաև յուրաքանչյուր տարվա համար փոխհատուցման ենթակա ծախսերի ծավալները սահմանելու մասին>> թիվ թիվ 1278-Ն որոշմամբ սահմանված կարգով, համաձայն, որի փոխհատուցումները նախարարությունը պետք է իրականացնի համագործակցող բանկերի միջոցով: Որոշման կատարման նպատակով նախարարությունը դիմել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ՝ պայմանագիր կնքելու առաջարկով, սակայն բանկից ստացվել է մերժում: Այնուհետև, նախարարությունը, աջակցության խնդրանքով 02.02.2021թ. ՄԱ/ԲՀ-5-2/3900-2021 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկ, որտեղից ստացվել է պատասխան այն մասին, որ իրենք նախարարության գրությունը և Որոշումն ուղարկել են մի շարք առևտրային բանկերի: Սկսած փետրվարի 10-ից, ըստ նախարարության տեղեկատվության, նախարարության հետ կապ է հաստատել «Ակբա բանկ» ԲԲԸ, «Արդշինբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, որոնց ուղարկել են Որոշումը, պայմանագիրը և համապատասխան տեղեկատվությունը՝ ուսումնասիրության համար: Ի վերջո, նշված բանկերից ոչ մեկը չի համաձայնել համագործակցել նախարարության հետ: Մարտ ամսվա ընթացքում Հայէկոնոմ և Հայբիզնես բանկից տեղեկացրել են, որ փոխհատուցման նշված ծրագիրը բարդ է իր պահանջներով, և իրենք պետք է դիմեն ծրագրավորող անձնակազմին՝ նոր ծրագիր մշակելու համար, ինչը նպատակահարմար չեն գտնում, քանի որ Որոշմամբ սահմանված բանկային ծառայությունները պետք է իրականացվեն անհատույց, և նույնիսկ հատուցման դեպքում՝ այն իրեն չի արդարացնում: Խնդրի լուծման նպատակով նախարարությունը պատրաստել է «Հայաստանի Հանրապետությունում սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում

բնակվող միայնակ կենսաթոշակառուների սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցման կարգը, ինչպես նաև 2022 թվականին փոխհատուցման ենթակա ծախսերի ծավալները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 30-ի N 1278-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը 07.06.2021թ. կարծիքի է ուղարկվել շահագրգիռ գերատեսչություններ, պատասխանները ստանալուց հետո նախագիծը 10.08.2021թ. գրությամբ ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Վարչապետի աշխատակազմից 03.09.2021թ. գրությամբ նախագիծը ետ է վերադարձվել նախարարություն՝ հանձնարարելով քննության առնել, և անհրաժեշտության դեպքում, լրամշակել նախագիծը, հիմք ընդունելով Վարչապետի աշխատակազմի իրավաբանական և կարգավորման ազդեցության գնահատման վարչությունների առաջարկությունները, ինչը և արվել է նախարարության կողմից, որից հետո լրամշակված նախագիծը 16.09.2021թ. ՄՆ/ԲՀ-5-2/37436-2021 գրությամբ կրկին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

5. 1160-11001 ծր. /Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում/՝ ճշտված պլանը կազմել է 3,636.9 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %: ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանում նշված միջոցառման չկատարման պատճառները, այն է՝ << Պայմանավորված է պայմանագրի դեռևս կնքված չլինելու հանգամանքով>>: Հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նախատեսվել է փոփոխություններ իրականացնել աջակցող միջոցների վերանորոգման ծառայությունների տրամադրման՝ ՀՀ կառավարության 10.09.2015թ. թիվ 1035-Ն որոշմամբ հաստատված Կարգում և համապատասխան որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Նախագծի համաձայն աջակցող միջոցների վերանորոգման ծառայությունները նախատեսվում է իրականացնել որակավորման ընթացակարգի արդյունքում որակավորված կազմակերպությունների կողմից, այլ ոչ մրցութային կարգով ընտրված: Նախարարության կողմից

վերանորոգման ծառայությունների մատուցման մրցույթ չի իրականացվել հիմնվելով ՀՀ կառավարություն Նախագիծը ներկայացնելու հանգամանքով:

Տարեկան նախատեսվել 100 հատ, իսկ 1-ին կիսամյակի համար՝ 45 հատ աջակցող միջոցի վերանորոգում: ՀՀ կառավարության 27.08.21թ. թիվ 1406-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 10.09.2015թ. թիվ 1035-Ն որոշմամբ հաստատված Կարգում կատարվել է համապատասխան փոփոխություններ, որն ուժի մեջ է մտել 11.09.2021թ.:

6. 1206-32002 ծր. / ՀԲ աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում սարքավորումների, ծրագրային ապահովման և աշխատանքային միջավայրի արդիականացում/ճշտված պլանը կազմել է 42,000.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %: 2 ՄՍԾՏԿ-ների կահույքների համար պայմանագրով նախատեսված գումարները կվճարվեն թերությունների շտկումից հետո: ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանում նշված միջոցառման չկատարման պատճառները, այն է՝ <<2 ՄՍԾՏԿ-ների կահույքների համար պայմանագրով նախատեսված գումարները կվճարվեն թերությունների շտկումից հետո: Համակարգչային տեխնիկայի գնման մրցույթը հետաձգվել է, սակայն պայմանագրերն արդեն կնքվել են, մատակարարումը կիրականացվի 3-րդ եռամսյակում>>: Հարկ է նշել, որ սարքավորումների ձեռքբերման նպատակով 2020-2021թ. ընթացքում կնքված պայմանագրերից թվով 2 պայմանագրերի /36.62 մլն. դրամ արժեքով/ ժամկետները ավարտվել են, սակայն Հանձնման-Ընդունման աշխատանքները չի ավարտվել և վճարումներ չի կատարվել: 2021թ. 1-ին կիսամյակում կնքվել են 2 նոր պայմանագրեր 30.11 մլն դրամ արժեքով /«Լիլիթ Դերձյան» ԱԶ և «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ/:

5. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Նախարարության կողմից 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարողականի նկատմամբ հաշվեքննությունների ընթացքում նույնպես

արձանագրվել էին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների անհամապատասխանություններ, մասնավորապես առաջին եռամսյակի համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 18 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 86,641.88 հազ. դրամի կատարողականների գումար, վեց ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 19 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 154,028,69 հազ. դրամի կատարողականների գումար, ինն ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 8 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 167,294.39 հազ. դրամի կատարողականների գումար: Նշված ժամանակաշրջանների ընթացիք եզրակացությունները կազմելիս արվել են առաջարկություններ նշված անհամապատասխանությունները, ինչպես նաև արձանագրված այլ փաստերը վերացնելու ուղղությամբ, որին ի պատասխան նախարարությունը տեղեկացրել է, որ ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ համապատասխան հրամաններ, հանձնարարականներ, արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում ուսումնասիրելով 2020 թվականի տարեկան կատարման ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների հետ, անհամապատասխանություններ չեն արձանագրվել: Իսկ 2021 թվականի երեք ամիսների կատարողականի նկատմամբ հաշվեքննության արդյունքներով արձանագրվել էր ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների անհամապատասխանություններ ընդամենը 5 դեպք՝ 132,724.65 հազ. դրամի չափով: Ի պատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի 02.08.2021թ. թիվ ՀՊԵ-388 գրության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 02.09.2021թ. թիվ 35753-21 գրությամբ ներկայացրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման արդյունքների վերաբերյալ>> ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունում ներկայացված առաջարկությունների հիման վրա մշակված և հաստատված միջոցառումների ծրագիրը:

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

1. Գործուն միջոցներ ձեռնարկել 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների կատարողականի հաշվետվություններում վեց ամիսների ընթացքում կատարված փաստացի ծախսի գումարների մի շարք պատճառներով չներառված տվյալների գույքագրման ու ՀՀ ֆինանսների

- նախարարություն հաջորդիվ ներկայացվող հաշվետվություններում դրանց ամբողջական ներկայացնելու ուղղությամբ՝ այսուհետ հնարավորինս բացառելով նշված բնույթի ֆինանսական ցուցանիշների չներառումը ՀՀ պետական բյուջեի կատարողականի հաշվետվություններում:
2. Առավել խստացնել Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների և/կամ պայմանագրային կողմերի նկատմամբ հսկողական գործընթացը՝ ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ներկայացվող հայտերի/կատարողականների ու սահմանված հաշվետվությունների ժամանակին և ամբողջական ներկայացնելու նպատակով:
 3. Միջոցներ ձեռնարկել ՀՀ պետական բյուջեով սահմանված ծախսերի ծրագրային ցուցանիշների թերակատարումները լրացնելու, ինչպես նաև գերակատարումները հնարավորինս բացառելու ուղղությամբ: Մասնավորապես գնման գործընթացները և այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երկուստեք առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով (ՀՕ-21), ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017 N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգով նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները:
 4. Պարբերաբար, ըստ ստացվող պաշտոնական տվյալների վերագնահատել մի շարք սոցիալական ծրագրերի հաշվարկային թվերում նախատեսված շահառուների քանակները՝ համապատասխանեցնելով դրանք 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով ծրագրի շահառու դասված կամ այլ ծրագրի շահառույի կարգավիճակ ստացած անձանց իրական քանակներին:
 5. Միջոցներ ձեռնարկել տարեկան և հաշվետու ժամանակաշրջանների ճշտված պլանների քանակային և արժեքային թերի պլանավորված ցուցանիշները, ինչպես նաև հաշվետվություններում ոչ ֆինանսական փաստացի սխալ արտացոլված ցուցանիշների ճշգրտման ուղղությամբ: Միննույն ժամանակ վերստուգել վեց, ինն ամիսների և տարեկան պլանային ցուցանիշների մեծությունները և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան ճշգրտումներ:

6. Միջոցներ ձեռնարկել՝ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող Հայաստանի Հանրապետության 2021 թվականի կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների, հաշվետվության հավելված 11.1-ի <<տարբերության պատճառները>> սյունակում նախարարության կողմից ներկայացված հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների տարբերության պատճառները առավել հիմնավոր նկարագրելու ուղղությամբ:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ սույն ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

« » հոկտեմբերի 2021 թվական
 ՀՀ հաշվեքննիչ պալատ,
 Մ.Բաղդամյան 19, Երևան
 Հայաստանի Հանրապետություն



Կարեն Կարապետյան